ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ԵՎ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ*

ՀՏԴ 347.2

Գրիգորյան Ալիսա

Արցախի պետական համալսարանի
Պատմության և իրավագիտության ամբիոնի դասախոս
Ստեփանակերտ, Արցախի Հանրապետություն
alisagrigoryan1979@mail.ru

Աշխատանքի նպատակն է ձևավորել պատկերացումներ սեփականության իրավունքի ձեռքբերման հիմքերի, եղանակների, դրանց դասակարգման, սեփականության իրավունքի ձեռքբերման եղանակների գիտական իմացության խորացմանը, թեմայի հետ առնչվող մի շարք հարցերի լուսաբանմանը:

Նշված խնդիրներին հասնելու համար անհրաժեշտ է լուծել հետևյալ խնդիրները՝ բացահայտել սեփականության իրավունքի բովանդակությունը, վերլուծել սեփականության իրավունքի ձեռքբերման հասկացությունը, հիմքերը, ձևավորման եղանակները, թեմային վերաբերող գրականության մեջ գոյություն ունեցող հիմնական տեսակետների սպեկտրի շարադրումը, սեփական տեսակետի ձևավորումը և հիմնավորումը :

Նյութեր և մեթոդներ: Հոդվածում արծարծվող հիմնախնդրի քննարկման համար հիմնականում հիմք է հանդիսացել ռուսալեզու գրականությունը, իսկ հետազոտման ընթացքում օգտագործել ենք իրավահամեմատական, համակարգային-վերլուծության, իրավունքի նորմի մեկնաբանման մեթոդները:

Բանալի բառեր՝ սեփականության իրավունք, սեփականության իրավունքի ձեռքբերման հիմքեր և եղանակներ, իրավահաջորդության չափանիշներ, սեփականության իրավունքի ձեռքբերման սկզբնական և ածանցյալ եղանակներ, ստեղծում, փոխանցում, առգրավում, հետգնում:

Ներածություն

Սեփականության իրավունքի ինստիտուտը հասարակական գիտակցության պատմության մեջ գլխավոր հարցերից մեկն է հանդիսանում: Տվյալ ինստիտուտի նշանակությունը կայանում է հասկանալու սեփականության իրավաբանական կառուցվածքի ժամանակակից իմաստն ու բովանդակությունը: Քաղաքացիների նյութական և հոգևոր պահանջմունքները հիմնականում բավարարվում են սեփականության իրավունքով նրանց պատկանող ունեցվածքի հաշվին: Այդ սեփականությունը նախ և առաջ սպառողական կարիքների բավարարման համար նախատեսված բարիքների յուրա-

* Հոդվածը ներկայացվել է 21.07.2022:
Տպագրության է երաշխավորել Մխիթար Գոշ Միջազգային համալսարանի իրավագիտության ամբիոնի վարիչ՝ ի.գ.թ. դոցենտ Ս. Բարխուդարյանը: 12. 08. 2022:
Հոդվածն տպագրության է ընդունվել 28.08.2022:

ցում է, սպառման առարկաների պատկանելության, օգտագործման և տնօրինման կապակցությամբ առաջացող հասարակական հարաբերություն: Դրա հետ միասին սեփականության իրավունքով քաղաքացիներին կարող են պատկանել արտադրության միջոցներ և գործիքներ, որպիսիք քաղաքացին կարող է օգտագործել ինչպես իր և իր ընտանիքի անդամների կարիքների համար, այնպես էլ արտադրություն կազմակերպելու, այլ առևտրային գործունեությամբ զբաղվելու, վարձու աշխատանք օգտագործելու և շահույթ ստանալու նպատակով գործարարությամբ զբաղվելու համար:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի համաձայն[1] յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի զրկել իր գույքից, բացառությամբ՝ ի շահի հանրության և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով և միջազգային իրավունքի այլ սկզբունքներով: Սեփականության իրավունքն իր ամրագրումն է ստացել նաև ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ի մասում, ըստ որի՝ յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք[2]:

Քննարկում, հիմնական տեքստ: Սեփականության իրավունքի ձեռքբերման եղանակը մի կողմից իրենից ներկայացնում է արտաքին ակտ՝ վկայակոչելով կատարվող սեփականության իրավունքի ձեռքբերման օրինականությունը, մյուս կողմից՝ դրա ձեռք բերման իրավական հիմքերը: Սեփականության իրավունքի ձեռքբերման համար ոչ բոլոր դեպքերում է արտաքին ձևական ակտ պահանջվում, բայց և ձեռքբերման օրինականությունն ունի էական նշանակություն: Առաջին, սեփականության իրավունքի բնույթն որպես դրական իրավունքի ինստիտուտ, ինքնին սահմանված ձև է պահանջում: Երկրորդ՝ սեփականության իրավունքի գործողությունը սահմանափակվում է միայն օրենքում նշված սահմաններով:

Իրավաբանական գրականության մեջ նշվում է, որ կյանքի ապահովման նպատակով տարբեր բարիքների պահանջը և որակի բարձրացումը դրա ձեռքբերման անհրաժեշտություն է առաջացնում[3]: Նյութական արժեքների նկատմամբ բացարձակ տիրապետում ձեռքբերելու ձգտումը պայմանավորված է իրավական ակտերում մի շարք առանձնահատկությունների ամրագրման անհրաժեշտությամբ, դրանց նկատմամբ ձեռք բերելով բացարձակ իրավունք՝ սեփականության իրավունք[4]:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ քաղ օր-ք) գլուխ 11-ը բովանդակում է իրավաբանական փաստերի ամբողջական համակարգ, որտեղ անդրադարձ է կատարվում սեփականության իրավունքի ձեռքբերման հիմքերին: Նման փաստերի համակցությունը, հանդիսանալով որպես գույքի նկատմամբ բացարձակ իրավունք ձեռք բերելու իրավաբանական կազմ, գրականության մեջ ընդունված է անվանել սեփականության իրավունքի ձեռքբերման հիմքեր կամ եղանակներ: Ներկայումս իրավաբանա-

---

[1]Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական Կոնվենցիա, Հռոմ 1950թ.:

[2] ՀՀ սահմանադրություն 2005թ, 2015թ, փոփոխություններով:

[3] Васьюта Д.В. Понятие и виды способов и оснований приобретения (возникновения) право собственности.// Юристь 2015, N 24,C 16:

[4] Указ, учеб, стр 16:

կան գրականության մեջ միասնական կարծիք չկա «հիմք» և «եղանակ» հասկացությունների վերաբերյալ: Դրանք կիրառելի են «սեփականության իրավունքի ձեռքբերում» եզրույթի իմաստով:

Ե. Ա. Սուխանովը իր աշխատանքներում նշված հասկացությունները օգտագործում է որպես հոմանիշներ, նման երևույթները բացատրելով հետևյալ կերպ՝ «քանի որ սեփականության իրավունքի առաջացման (հիմքերի) հետ կապված իրավաբանական փաստերի մեծ մասը վերաբերվում է իրավաբանական գործառույթների խմբին (ընդգրկելով անշուշտ իրավաբանական արարքները) ընդունված է նաև դրանց անվանել սեփականության իրավունքի ձեռքբերման եղանակներ[1]: Գոյություն ունի նաև կարծիք, համաձայն որի «սեփականության իրավունքի ձեռքերման հիմքեր» և «սեփականության իրավունքի ձեռքբերման եղանակներ» հասկացություններն հավասարանշանակ են և քաղաքացիական իրավունքում դրանք տարանջատելու հիմքեր չկան: Իրենց հերթին Մ. Բուբնովը[2], Ի. Կիսելյովը[3], Ն. Օգնեվան[4], Ի. Տարարիշկինը[5] անդրադարձել են նշված հասկացությունների տարբերություններին և նշել, որ «սեփականության իրավունքի ձեռքբերման հիմք ասելով պետք է հասկանալ իրավաբանական գործողություններ, կամ հասկացություններ, իսկ սեփականության իրավունքի ձեռքբերման եղանակ՝ օրենքում նշված փաստացի գործողությունները:

Կիսում ենք շված հեղինակների տեսակետները, քանի որ, որ «հիմք» և «եղանակ» հասկացություններն իրենց բովանդակությամբ նույնական չեն:

Այսպես՝ օրինակ՝ «հիմք» եզրույթն օգտագործվում է իրավաբանական փաստերի թվարկման՝ քաղաքացիական իրավունքների և պարտականությունների առաջացման (ՀՀ քաղ. օր-ք. հոդվ. 10), սեփականության իրավունքի ձեռք բերման, կամ դադարեցման (ՀՀ քաղ. օր–ք 172,179 հոդվածներ), նոր ստեղծված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման ժամանակ (քաղ. օր–ք, հոդվ.173): Իրավաբանական փաստեր ասելով՝ ընդունված է հասկանալ «կյանքի որոշակի հանգամանքներ (պայմաններ, իրավիճակներ), որոնց հետ իրավունքի նորմերը կապում են իրավահարաբերությունների առաջացումը, փոփոխումը և դադարումը»:

Իրավաբանական գրականության մեջ առանձնացվել են իրավաբանական փաստերի հատկանիշները, որի համաձայն իրավաբանական փաստը- դա գործողություն կամ անգործություն է, որը ամրագրված է նորմատիվ իրավական ակտում, փաստաթղթերով հավաստվել է, առաջացնում է որոշակի իրավական հետևանքներ և այլն:

«Եղանակ ասելով հասկացվում է գործողություն կամ գործողության համակարգ, որը կիրառվում է որևէ աշխատանք կատարելիս, ինչ–որ բան իրականացնելիս: ՀՀ քա. օր–քը «եղանակներ» եզրույթն օգտագործում է մասնավորապես գործողությունն-

[1] Նույն տեղում, c. 16.

[2] Бубнов М.Ю. Приобретательная давность как основание приобретения права собственности: автореф.дис…канд. юрид. наук. -Рязань,2005, стр 46:

[3] Киселев И.А. Права собственности граждан на недвижимое имушество; особенности приобретения и осушествления: дис. …канд.юрид. наук-Рязань.,2005,- стр. 46.

[4] Огнева Н.И. Теоретические и практические вопросы приобретения и прекрашения права собственности гражданами: автореф.дис. …канд.юрид. наук.-М.,2006.-стр .12:

[5] Тарарышкина И.С. Основания приобретения права собственности гражданами; автореф.дис….канд.юрид. наук.-Краснодар,2005, стр.18:

ների համակցության թվարկման ժամանակ, ուղղված քաղաքացիական իրավունքների պաշտպանությանը (ՀՀ քաղ. օր-ք հոդված 14), պարտավորությունների կատարման ապահովման եղանակներին (ՀՀ քաղ. օր–ք հոդվ. 368): Ըստ անալոգիայի՝ լրիվ տրամաբանական է տվյալ եզրույթի օգտագործումը սեփականության իրավունքի առաջացմանն ուղղված գործողությունների տարբերակների քննարկման համար: Եվ ինչպես իրավացիորեն նկատել է Բ. Խասկելբերգը, ինքնին «իրավունքի ձեռքբերման եղանակը», սովորաբար ոչ «խորհրդային և ոչ էլ ժամանակակից ռուսական իրավաբանական գրականությունում չի բացահայտվում»[1]:

Մի շարք դեպքերում սեփականության իրավունքի առաջացման համար, իրավունքի ձեռքերման որոշակի եղանակի գործողություններից զատ, անհրաժեշտ է այլ իրավաբանական փաստերի առկայություն (երրոդ անձանց գործողություն կամ անգործություն, իրադարձություններ): Օրինական ժառանգման կարգով սեփականության իրավունք ձեռք բերելու եղանակներով, որը նախատեսված է քաղ. օր–քի 1225 հոդվածով, իրավակրողի կամքից բացի անհրաժեշտ են հետևյալ հիմքերը՝ (իրավաբանական փաստերը) ժառանգորդի մահը, նախորդ հերթի ժառանգորդների բացակայությունը, ժառանգության կազմում գույքի առկայությունը և այլն: Նման իրավաբանական փաստերի բացակայությունը, ինչպես արդարացիորեն նշում է Դ. Վասյուտան, բերում է գործողություններ կատարելու հիմքերի բացակայությանը, որը կազմում է սեփականության իրավունքի ձեռքբերման այս կամ այն եղանակը: Այսպիսով՝ սեփականության իրավունքի ձեռքբերման համար, այսինքն գույքի նկատմամբ բացարձակ իրավունքի առաջացման համար անհրաժեշտ են հիմքեր: Կիրառելի նման հիմքերի համար գիտնականի կարծիքով, տրամաբանական է օգտագործել «սեփականության իրավունքի ձեռքբերման հիմքեր» հասկացությունը[2]:

Նշենք նաև, որ սեփականության իրավունքի ձեռքբերման համար փաստացի գործողությունների կատարումը անհրաժեշտ է, բայց ոչ բավարար: Օրինակ՝ գույքի փոխանցումը հնարավորություն է տալիս խոսել սեփականության իրավունքի առաջացման վերաբերյալ: Այն կարող է իրականացվել նաև այլ համաձայնությունների ուժով, որոնք սեփականության իրավունքի փոխանցման հետ բնավ կապված չեն, օրինակ՝ գույքի ժամանակավոր օգտագործումը: Սեփականության իրավունքը կարող է առաջանալ միայն այն դեպքում, երբ գույքի փոխանցման հիմքում ընկած է իրավաբանական փաստը, որը հանդես է գալիս որպես սեփականության իրավունքի ձեռքբերման հիմք: Համապատասխանաբար սեփականության իրավունքի ձեռքբերման համար անհրաժեշտ է եղանակների և հիմքերի համակցություն:

Քաղաքացիական իրավունքի գիտության մեջ ընդունված է առանձնացնել սեփականության իրավունքի ձեռքբերման եղանակների հետևյալ տարատեսակները՝ միակողմանի և բազմակողմանի, նյութական և ոչ նյութական, հատուցելի և ոչ հատուցելի, պետական, մունիցիպալ և մասնավոր սեփականության ձեռքբերման եղանակներ,

---

[1]Хаскельберг Б.Л. Основания и способы приобретения права собственности. (общие вопросы). Цивилистические исследование: Ежегодник гражданского права. Выпуск второй. (2005).- М.,2006.,с.342:

[2] Васьюта Д.В., указ. раб., стр. 17.

հարկադիր և ինքնական, ընդհանուր (կիրառելի բոլոր անձանց նկատմամբ) և հատուկ (որոշակի խմբի սուբյեկտների նկատմամբ):

Սեփականության իրավունքի ձեռքբերման հիմքերը ՀՀ քաղաքացիական իրավունքում ավանդաբար ընդունված է բաժանել՝ սկզբնականի և ածանցյալի:Դեռևս դասական հռոմեական իրավունքում ձեռքբերման եղանակը համարվում էր սկզբնական (acquisition originaria), եթե ձեռքբերողի սեփականության իրավունքը հիմնված չի եղել այլ անձի իրավունքի վրա և ածանցյալ (acquisition denvativa), եթե ձեռք բերողի սեփականության իրավունքը հիմնված է եղել նախորդ սեփականատիրոջ իրավունքի վրա (ձեռքբերողը դառնում է նախորդ սեփականատիրոջ իրավահաջորդը):

Մինչհեղափոխական գրականության շրջանակներում ընդհանուր առմամբ համակարծիք էին սեփականության իրավունքի ձեռքբերման եղանակները՝ սկզբնականի և ածանցյալի դասակարգման հետ կապված: Գ. Շերշենեվիչը պնդում էր, որ սեփականության իրավունքի առաջացման սկզբնական եղանակի միջոցով է օբյեկտի նկատմամբ առաջանում սեփականությունը չհամարվելով որևէ մեկի սեփականությունը, կամ էլ այն օբյեկտի նկատմամբ, որը թեկուզ և այլ անձի սեփականությունն էր համարվում, բայց ծառայում է նոր ձեռքբերողի տիրապետմանը՝ անկախ նախորդ սեփականատիրոջ իրավունքներից: Ածանցյալ եղանակով ձեռքբերված իրավունքների ծավալը պայմանավորված է նախորդ սեփականատիրոջ իրավունքով, որն առկա չէ սկզբնական եղանակում: Դրանից բացի, ի տարբերություն առաջին եղանակի, ածանցյալ եղանակի դեպքում միշտ կա անհրաժեշտություն ստուգելու նախորդ սեփականատիրոջ իրավունքները[1]:

Ո. Սինայսկին գտնում էր, որ սկզբնական եղանակի դեպքում սեփականության իրավունքն առաջանում է առաջին անգամ և կամ էլ այնպիսի ձևով, որ սեփականության նախկին իրավունքը համարվում է գոյություն չունեցող: Ածանցյալի դեպքում սեփականության իրավունքը նոր սեփականատիրոջ համար մտցնում է լրացուցիչ ծանրաբեռնում, իսկ երկրորդ եղանակի ժամանակ նման ծանրաբեռնումը բացակայում է[2]:

Դ. Մեյերը, քննադատելով սեփականության իրավունքի ձեռքբերման եղանակների դասակարգման հիմքերը, ելնում էր նրանից, որ իրավաբանական կենցաղում չկան ոչ–ոքի չպատկանող իրեր, իսկ եթե դրանք անգամ գոյություն ունեն, ապա բոլորովին օտար են իրավաբանական սահմանումներին, օրինակ՝ ինչպես մոլորակին: Նրա կարծիքով, սեփականության իրավունքը, ինչպես և ցանկացած իրավունք, ունի որոշակի սկիզբ և ճանապարհ, որոնց հետ բացվում է այդ սկիզբը, անվանում են սեփականության իրավունքի ձեռքբերման եղանակներ: Իրավագետն առանձնացրել է սեփականության իրավունքի ձեռքբերման եղանակների տեսակները՝ 1) տիրապետման միջոցի պահանջ (սեփականության հավունք ձեռք չի բերվում, եթե ձեռքբերողը դեռևս չի տիրապետում գույքին), 2) կախված չէ տիրապետման հետ[3]: Իր հերթին քննադատելով Դ. Մեյերի կարծիքը՝ Ե. Վասկովսկին նշում էր, որ ձեռքբերման եղանակների բաժանման առաջարկվող տեսակետը, իրավաբանական տեսանկյունից աննպատակահարմար է և չի հանգեցնում էական իրավական հետևանքների: Սկզբնական եղանակի

[1] Шершеневич Г.ф. Учебник русского гражданского права (по изд.1907г.).
[2] Синайский В.Н. Русское гражданское право,-Спб,1997, Тула: Автограф, 2001, стр 218:
[3] Мейер Д.И. Русское гражданское право,-М.,2002.-с.218:

ժամանակ ձեռքբերողի մոտ առաջ է գալիս նոր սեփականության իրավունք, իսկ ածանցյալի դեպքում ուրիշի իրավունքը ձեռքբերողին է անցնում այն տեսքով, ինչպիսին այն գոյություն ուներ նախկին կրողի մոտ[1]:

Յու. Անդրեևի կարծիքով՝ սեփականության իրավունքի ձեռքբերման սկզբնական և ածանցյալ եղանակների տարբերության հիմք են հանդիսանում վերը նշված երկու հատկանիշները՝ իրավունքի կամաարտահայտումը և և իրավահաջորդությունը: Սեփականության իրավունքի առաջացման դեպքում, օրինակ՝ տիրազուրկ գույքի նկատմամբ (սկզբնական եղանակ) չի պահանջվում այդ գույքից հրաժարված նախկին սեփականատիրոջ կամաարտահայտումը: Շատ դեպքերում տիրազուրկ գույքի սեփականատերն ընդհանրապես հայտնի չէ (ՀՀ քաղ. օր–ք հոդվ.178,1մաս): Բայց միաժամանակ տիրազուրկ գույքի սեփականության իրավունքի սկզբնական եղանակի դեպքում բացակայում է նաև նախորդ սեփականատիրոջ իրավահաջորդությունը (բացակայության կամ անհայտ լինելու հանգամանքով): Ածանցյալ եղանակի դեպքում առկա է իրավանախորդի կամքը և իրավահաջորդության իրավունքը նոր սեփականություն ձեռքբերողի նկատմամբ: Քանի որ սեփականության իրավունքի ձեռքբերումը տիրապետման վաղեմության ուժով հնարավոր է նաև տիրազուրկ գույքի նկատամբ, ապա այն վերաբերում է սեփականության իրավունքի ձեռքբերման՝ հաշվի առնելով իրավանախորդի սեփականության իրավունքի կորստի և իրավահաջորդի կամքը:

Տվյալ դասակարգման նշանակությունը տեսության և գործնական տեսանկյունից կայանում է ձեռքբերողի իրավական կարգավիճակի սահմանման տարբեր մոտեցումներով, որը կախված է սեփականության իրավունքի ձեռքբերման եղանակից: Այսպես՝ եթե ածանցյալ եղանակը ընկած է սեփականության իրավունքի ձեռքբերման հիմքում (օրինակ՝ ժառանգում, կամ քաղաքացիա–իրավական գործարք), ապա նոր սեփականատիրոջմ իրավասությունները փոխանցվում են նույն ծավալով, որքանով որ այն պատկանում էր նախորդին, քանի որ ոչ ոք չի կարող մյուսին տալ առավել իրավունք, քան ինքն ունի՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Եթե սեփականության իրավունքի ձեռքբերումն իրականացվում է սկզբնական եղանակով (օրինակ՝ գտանքի՝ ՀՀ քաղ. օր–ք հոդվ.180, գանձի՝ ՀՀ քաղ. օր-ք հոդվ. 186), ապա սեփականատերը ձեռք է բերում իրավասությունների այն ծավալը, որը նախատեսված է համապատասխան նորմերով, պայմանավորված այն հանգամանքով, որ գտածոյի նախորդը չկա, կամ էլ վերջինիս սեփականության իրավունքն առաջանում է նախկին սեփականատիրոջ իրավունքից անկախ:

Տարբեր հեղինակների կողմից առաջարկվում են տարբեր չափանիշներ սեփականության իրավունքի ձեռքբերման տարանջատման նպատակներով: Որոշ հեղինակներ գտնում են, որ սեփականության իրավունքն ածանցյալ եղանակով ձեռք է բերվում ձեռքբերողի համաձայնությամբ և նախկին սեփականատիրոջ կամքով, իսկ սկզբնականի դեպքում՝ առաջին անգամ կամ անկախ սեփականատիրոջ կամքից, որը վկայում է նախորդ սեփականատիրոջ կամքը հիմք ընդունելու անհրաժեշտության մասին[2]: Այսպես, օրինակ, Օ. Իոֆֆեն գրում է. «Սկզբնական եղանակները նրանց համար

[1] Васьковский Е.В. Учебник гражданского права.-М.,2003, с. 303.

[2] Советское гражданское право, курс лекций.Л.,1958,ч.1, стр 253:

բնութագրվում են այն ընդհանուր պահով, որ դրանք կապված չեն նախկին սեփականատիրոջ կամքից, քանի որ նման բան ընդհանրապես չկա կամ նրա կամքը հաշվի չի առնվում[1]: Ածանցյալ եղանակները բնութագրվում են նրանով, որ սեփականության իրավունքը ձեռք է բերվում միայն նախորդ սեփականատիրոջ կամքով և նոր սեփականատիրոջ համաձայնությամբ: Միաժամանակ պրակտիկայում հանդիպում են դեպքեր, երբ նշված չափանիշը չի աշխատում, օրինակ՝ նախորդ սեփականատիրոջ սեփականատիրական իրավունքի հարկադիր դադարեցումը (սեփականատիրոջ պարտավորություններով գույքի վրա բռնագանձում տարածելը ՀՀ քաղ. օր–ք հոդվ.281):

Տվյալ իրավիճակում իրավասությունները ձեռքբերողին են անցնում նույն ծավալով, որքանով այն իր տեղն ուներ նախորդ սեփականատիրոջ մոտ, քանի որ այստեղ ծանրաբեռնվածությունը դադարեցնելու հիմքեր չկան[2]:

Գենկինի կարծիքով՝ ածանցյալ եղանակ ասելով հասկացվում է «անձի կողմից սեփականության իրավունքի ձեռքբերման եղանակ, որը հիմնվում է նախորդ սեփականատիրոջ իրավունքի վրա[3]: Ածանցյալ ձևով սեփականության իրավունքի ձեռքբերման հնարավորությունը նախորդ սեփականատիրոջ արտահայտած կամքի բացակայությամբ հեղինակի կողմից թույլատրվում է, բայց բացառապես՝ ժառանգման դեպքում: Մնացած դեպքերում, ինչպես պնդում է Դ. Գենկինը, սեփականության իրավունքը, ածանցյալ ձեռքբերման դեպքում, պետք է փոխանցվի սեփականատիրոջ կողմից իրավազոր անձի կամ հենց սեփականատիրոջ կողմից:

Մյուս հեղինակները՝ որպես սեփականության իրավունքի ձեռքբերման եղանակների տարանջատման չափանիշ առաջարկում են օգտագործել իրավահաջորդությունը[4]:

«Իրավահաջորդությունը սուբյեկտիվ իրավունքի փոխանցումն է (լայն իմաստով նաև իրավական պարտավորության) մեկ անձից (իրավակրողից) մյուսին՝ (իրավահաջորդին) ածանցյալ իրավաձեռքբերման կարգով[5]: Համաձայն տվյալ չափանիշի՝ եղանակները, որոնց դեպքում սեփականության իրավունքի փոխանցումը տեղի է ունենում մի անձից մյուսին, անվանում են ածանցյալ, իսկ այն դեպքում, երբ նոր սեփականատիրոջ իրավունքը կախված չէ նախորդի իրավունքից, կամ էլ նման բան երբեք տեղի չի ունեցել՝ սեփականության իրավունքի ձեռքբերման սկզբնական եղանակ:

Սեփականութան իրավունքի ածանցյալ ձեքբերումը Յու. Տոլստոյը բնութագրում է որպես իրավաձեռքբերում, որի հիմքում ընկած է նոր սեփականատիրոջ իրավունքի կախվածությունը նախորդի իրավունքներից և այդ որակով դիտարկում է ոչ միայն դրա ձեռքբերումը ժառանգման կարգով կամ պայմանագրով, այլև՝ գույքի նկատմամբ անձի սեփականության իրավունքի դադարման դեպքերում, որը նրան չի կարող պատկանել և այլն: Մեր կարծիքով՝ առավել հիմնավոր է այն տեսակետը, որի համաձայն՝ սեփականության իրավունքի ածանցյալ ձեռքբերումը տեղի է ունենում այն դեպքերում, երբ առկա է ձեռքբերողի իրավունքի կախվածություն նախորդի իրավունքից:

---

[1] Иоффе О.С. Советское гражданское право. Л.1958.с.283:

[2] Тарарышкина И.С. указ. раб., стр 49:

[3] Генкин Д.М. Право собственности в СССР. Курс советского гражданского права .М., 1961. С.126:

[4] Черепахин Б.Б. Правопреемство по советскому гражданскому праву.М.,1962, с.6-20:

[5] Նույն տեղում, с.282:

Սեփականության իրավունքի ձեռքբերման եղանակների դասակարգման ժամանակ անընդունելի է համարվում այդ երկու չափանիշներն օգտագործելու փորձերը: Այսպես, Ե. Սուխանովը սկզբնական եղանակներին է դասում դեպքերը, անկախ նախորդ սեփականատիրոջ իրավունքներից, կամ էլ, երբ դա ընդհանրապես չի եղել, իսկ ածանցյալի որակով դիտարկում է այն եղանակները, որոնց ժամանակ սեփականության իրավունքն առաջանում է նախորդ սեփականատիրոջ կամքով[1]: Հաշվի առնելով, որ տվյալ դասակարգումը չի նախատեսում սեփականության իրավունքի ձեռքբերման եղանակներ, որի դեպքում նախորդ սեփականատիրոջ իրավունքները, իր կամքից անկախ, դադարում են, վերջին տեսակետի հետ դժվար է համաձայնել:

Այսպիսով՝ սեփականության իրավունքի ձեռքբերման եղանակների տարանջատման չափանիշների վերաբերյալ տարբեր տեսակետների քննարկումից կարծում ենք, առավել ճիշտ և իրականությանը համապատասխանող է համարվում իրավահաջորդության չափանիշը, քանի որ հնարավորություն է տալիս առավել վերաբերելի համարել սեփականության իրավունքի ձեռքբերման տարբեր եղանակներն ինչպես սկզբնականի, այնպես և ածանցյալի դեպքում:

Ելնելով նշված չափանիշներից՝ անհրաժեշտություն է առաջանում առանձնացնել սեփականության իրավունքի ձեռքբերման կոնկրետ եղանակները: Սակայն ինչպես ցույց է տալիս իրավաբանական գրականության վերլուծությունը, այն իրենից դժվարություններ է ներկայացնում՝ կապված սեփականության իրավունքի ձեռքբերման եղանակներին վերաբերող միատեսակ կարծիք չլինելու հանգամանքով: ՀՀ քաղ. օր–քի 11-րդ գլխում նույնպես տվյալ հարցի վերաբերյալ միանշանակ պատասխան չի տրվում:

Միաժամանակ գրականության վերլուծությունները հնարավորություն են տալիս հետևություններ անել այն մասին, որ հեղինակների կողմից հստակ տարանջատում չի արվում սեփականության իրավունքի ձեռքբերման հիմքերի և եղանակների միջև՝ այդ հասկացությունները փոխարինելով մեկը մյուսով: Դեռ ավելին՝ կարելի է պատկերացնել, որ քաղ. օր-քի 173-188-րդ հոդվածները սոսկ հանդիսանում են դրույթներ, որոնք սոսկ կոնկրետացնում են քաղ. օր–քի 172 հոդվածի դրույթները և բացահայտում վերջինիս նշանակությունը:

Վերջին ժամանակներում սեփականության իրավունքի ձեռքբերման հիմքերն առավել հաճախ են օգտագործվում քաղաքացիական իրավունքի մասնագետների կողմից: Այսպես՝ Ի. Տարիշկինը, ելնելով իրավահաջորդության չափանիշից, առաջարկում է որպես սեփականության իրավունքի ձեռքբերման եղանակ առանձնացնել նոր գույքի (իրի) ստեղծումը և տիրապետումը, իսկ ածանցյալի որակով՝ փոխանցումը և հետգնումը[2]:

Մ. Պոպովիչը, նշված սեփականության իրավունքի ձեռքբերման եղանակների կողքին, առաջարկում է ածանցյալ եղանակների թվին դասել նաև բռնագրավումը[3]: Ըստ որում՝ ՌԴ. –ան Քաղ. օր–քի 219-234-րդ հոդվածներում (ՀՀ քաղ. օր–ք, 173-178 հոդվածներ) ամրագրված դրույթները նրանք դասում են սեփականության իրավունքի ձեռքբերման հիմքերին, որն առավել տրամաբանական է և իրականությանը համապա-

---

[1] Гражданское право:учеб.в 4т:/от вред Е.А. Суханов. 3-е изд.перераб.и доп..М.,1962, с6-20:

[2] Նույն տեղում, Тарарышкина И.С стр.50.

[3] Попович М.М. Приобретение прав собственности в гражданском праве России: авт. Дисс….канд. юрид. Наук.Волгоград,2002. С.14:

տասխանող, քանի որ տվյալ հոդվածներում մատնանշվում է իրավաբանական փաստերի մասին, որոնք նշանակություն են ձեռք բերում իրավազոր անձի կողմից համապատասխան գործողություններ իրականացնելիս:

Համամիտ լինելով նշված հեղինակների կարծիքների հետ՝ նշենք, սեփականության իրավունքի ձեռքբերման եղանակները և դրան համապատասխանող հիմքերը:

Գույքի ստեղծմանը (պատրաստմանը)՝ որպես սեփականության իրավունքի ձեռքբերման եղանակ, համապատասխանում են հետևյալ հիմքերը՝ նոր ստեղծված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը (հոդվ.173), վերամշակումը (հոդվ.174):

Սեփականության իրավունքի ձեռքբերումը տիրապետման ճանապարհով վերաբերում են՝ հետևյալին՝ հավաքելու համար հանրամատչելի գույքի սեփականացումը (հոդվ.175) սեփականության իրավունքի ձեռքբերումը վաղեմության ձեռքբերման ուժով, (հոդվ.187), սեփականության իրավունքի ձեռքբերումը տիրազուրկ գույքի նկատմամբ (հոդվ.178), սեփականության իրավունքի ձեռքբերումը շարժական գույքի նկատմամբ, որից սեփականատերը հրաժարվել է (հոդվ.179), սեփականության իրավունքի ձեռքբերումը գտանքի նկատմամբ (հոդվ.180), սեփականության իրավունքի ձեռքբերումը առանց հսկողության թողնված կենդանիների նկատմամբ (հոդվ.183), սեփականության իրավունքի ձեռքբերումը գանձի նկատմամբ (հոդվ186):

Ինչպես արդեն նշել ենք, սեփականության իրավունքի ձեռքբերման ածանցյալ եղանակների դեպքում իր տեղն ունի իրավահաջորդությունը այսինքն՝ գույքային իրավունքի փոխանցումը մի անձից մյուսին: Դա հնարավոր դարձավ՝ ի շնորհիվ ժամանակակից իրավակարգի, որում սեփականության իրավունքը համարվում է միասնական իր բովանդակութամբ, անկախ նրանից, թե ով է է հանդիսանում նրա սուբյեկտը՝ հանրային իրավական կազմավորումը, իրավաբանական անձը, թե ֆիզիկական անձը[1]:

Որպես սեփականության իրավունքի ձեռքբերման ածանցյալ եղանակներ հանդես են գալիս՝ բռնագրավումը, փոխանցումը և հետգնման իրավունքը[2]: Գույքի բռնագրավումը որպես սեփականության իրավունքի ձեռքբերման ածանցյալ եղանակ համարվում է պետության բացարձակ առանձնաշնորհը: Սեփականության իրավունքի ձեռքբերման տվյալ եղանակին համապատասխանում են հետևյալ հիմքերը՝ սեփականության իրավունքի ձեռքբերումը գույքի նկատմամբ պարտավորություններով բռնագանձում տարածելիս, ռեկվիզիցիան և բռնագանձումը:

Որպես փոխանցման հիմքեր հետևում է համարել իրավահաջորդությունը իրավաբանական անձի վերակազմակերպման և գույքը ժառանգելիս, գույքը օտարելու վերաբերյալ պայմանագրերը, սեփականաշնորհումը, անժառանգ գույքի անցումը (որպես ժառանգություն) պետությանը:

Հետգնմանը՝ որպես սեփականության իրավունքի ձեռքբերման ևս մեկ եղանակի, համապատասխանում է այնպիսի հիմքեր՝ ինչպիսիք են, սեփականության իրավունքի ձեռքբերումը գույքը օտարելիս, որն օրենքի ուժով չի կարող պատկանել տվյալ անձին, անխնա պահվող մշակութային արժեքները, անշարժ գույքի օտարումը հողակտորի բռնագրավման հետ կապված, պետական և մունիցիպալ կարիքների համար հողակտորի հետգնումը և այլն:

---

[1] Նույն տեղում, Гражданское право/отв. ред. Е.А.Суханов, с.4:

[2] Նույն տեղում, Попович М.М. с.14:

Եզրակացություն

Սեփականության իրավունքի ձեռքբերման հիմքերը փաստացի գործողություններ են, որոնց արդյունքում անձը ձեռք է բերում սեփականության իրավունք: Այդ գործողությունները պետք է կրեն հստակ, ակնհայտ արտահայտված բնույթ, որը հնարավորություն կտա հասկանալու սեփականության իրավունք ձեռքբերելու ցանկություն ունեցող անձի ռեալ մտադրությունները: Հետազոտության հիմնական եզրահանգումն այն է, որ սեփականության իրավունքի ձեռքբերման եղանակների իրավաբանական բաժանումը՝ սկզբնականի և ածանցյալի, կարևորվում է նրանով, որ սեփականության իրավունքի ձեռքբերման սկզբնական եղանակն առաջ է գալիս առաջին անգամ և չկա որևէ կասկած, որ այն առաջանում է լրիվ ծավալով, իսկ ածանցյալի դեպքում գույքի (իրի) նմատմամբ իրավունքը կարող է առաջանալ այն ծավալով, որն առկա էր նախորդ սեփականատիրոջ մոտ: Փաստացի սեփականության իրավունքի սկզբնական ձեռքբերման դեպքում սեփականատիրոջ մոտ առավել շատ են իրավունքները, քան ածանցյալի դեպքում:

Վերլուծելով սեփականության իրավունքի ձեռքբերման տարբեր հիմքերը և եղանակները՝ պարզեցինք, որ նշված հարաբերությունները հավասարանշանակ չեն: Սեփականության իրավունքի ձեռքբերման հիմքեր համարվում են իրավաբանական փաստերը, որոնք օրենքի համաձայն, բերում են սեփականության իրավունքի առաջացմանը: Հավատարիմ մնալով իրավահաջորդության չափանիշներով սեփականության իրավունքի ձեռքբերման սկզբնականի և ածանցյալի տարանջատման ավանդական տեսակետներին առաջինին պետք է վերագրել նոր գույքի ստեղծումն ու տիրապետումը, իսկ ածանցյալի դեպքում՝ փոխանցումը, բռնագրավումը և հետգնումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Իրավական ակտեր

1. ՀՀ Սահմանադրություն, 1995թ.(2015թ. փոփոխություններով):
2. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, 1998թ.(2020թ.փոփոխություններով):
3. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական Կոնվենցիա, Հռոմ, 1950թ:

Ուսումնական գրականություն,մենագրություններ, ատենախ. սեղմագրեր

1. Андреев Ю.И. Собственность и права собственности: цивилистические вопросы: монография.-Изд-во Норма-инфра. М., 2013.
2. Бубнов М.Ю. Приобретательская давность как основание приобретения право собственности. автореф.дис…. канд. юр..наук. Рязань, 2005.
3. Васьюта Д.В. Понятие и виды способов и оснований приобретения (возникновения) право собственности.// Juристь 2015, N24.
4. Васьковский С.В. Учебник гражданского права. М., 2003.
5. Генкин Д.М. Право собственности СССР. Курс советского гражданского права.М., 1961г.
6. Иоффе О.С. Советское гражданское право. Л.1958., ч.1.
7. Киселов.И.А. Права собственности граждан на недвижимое имущество: особенности приобретения и осуществления; дис… канд.юрид.наук, Рязань, 2005,-с.46:

8. Огнева Н.И. Теоретические и практические вопросы приобретения и прекрашения права собственности гражданами; автореф. дис…канд. юрид. наук. М.,2006, с.12:
9. Попович М.М. Приобретение права собственности в гражданском праве России.Дис. канд. юрид. наук. Волгоград, 2002, с.14:
10. Суханов Е.А. Лекции о праве собственности-М.,1991
11. Синайский В.Н. Русское гражданское право,-Спб,1997, Тула: Автограф, 2001
12. Советское гражданское право, курс лекций.Л.,1958,ч.1
13. Тарарышкина И.С. Основания приобретения право собственнности, авт. дис… канд. юрид. наук.-Краснодар,2005. С.16:
14. Хаськелберг Б.Л. Основания и способы приобретения права собственности. Ежегодник гражданского права/ Выпуск второй. М. ,2006.
15. Черепахин Б.Б. Правопреемство по советскому гражданскому праву.М.,1962.
16. Шершеневич Г.Ф. Учебник русского гражданского права (по изданию1907г).

REFERENCES

Legal acts

1. HH-an Sahmanadrutyun 1995 t.(2015t. popochutjunnerov) (In Armenian)
2. HH-an qaxaqaciakan orensgirq,1998t.(2020t. popochutjunnerow) (In Armenian)
3. Mardu irawunqneri ev himnarar azatutjunneri pachtpanutjan masin Evropakan Konvencia Hrom 1950 t..(In Armenian)

Educational Literature, monographs, disertations, abstracts

1. Andreew Ju.I. Sobstewennost I prawo sobstwennosti, civilisticheskie woprosi.: monografija-Izd-wo Norma-Infra. M.2013. (in Russian)
2. Bubnow M.Ju. Priobretatelskaja dawnost kak osnowanie priobretenija prawo sobstwennosti. Avtoref kand. jurid. nauk. Rjazan 2005. (in Russian)
3. Wasjuta D.W. Ponjatie I widi sposobow osnowanij priobretenija (wozniknowenija) prawo sobstwennosti. Jurist 2005, N24 (in Russian)
4. Waskowskij S.W. Uchebnik grachdanskogo prava,M.,2003 t. (in Russian)
5. Genkin D.M.Prawo sobstwennosti SSSR. Kurs sowetskogo grachdanskogo prawa. M.,1961 (in Russian)
6. Ioffe O.S. Sowetskoe grachdanskoe prawo, L.1958 (in Russian)
7. Kiselew I.A...Pravo sobstwennosti grachdan na nedvichimoe imuchestvo.osobennosti priobretenija I osuchestvlenija. Dis…kand. jurid. nauk.Rjazan 2005, s.46 (in Russian)
8. Ogneva N.I. Teoreticheskie I prakticheskie voprosi priobretenija I prekrachenija parvo sobstvennosti grachdanami. avtoref dis…. kand. jurid. Nauk,M.,2006 s.12 (in Russian)
9. Popovich M.M. Priobretenie pravo sobstwennosti v grachdanskom prave Rossii .Dis…kand. jurid. nauk. Volgograd 2002,s.14 (in Russian)
10. Suchanow E.A. Lekcii o prave sobstvennosti-M.,1991 (in Russian)
11. Sinajskij V.N.Russkoe grachdanskoe parvo-SPb 1997-Tula, Avtograf 2001 (in Russian)
12. Sovetskoe grachdanskoe parvo, kurs lekcij 1958,sh1. (in Russian)
13. Tararichkina I.S. Osnovanie priobretenija prava sobstvennosti. avt. dis…kand, jurid. nauk.- Krasnodar 2005, s.16 (in Russian)
14. Chaskelberg B.V. Osnovanie I sposobi priobretenija prawo sobstwennosti. Echegodnik grachdanskogo prava/ Wipusk vtoroj .M., 2006 (in Russian)

15. Cherepachin B.B. Pravopreemstvo po sowetskomu grachdanskomu pravu M.1962. (in Russian)
16. Cherchenevich G.F.Uchebnik russkovo grachdanskogo prava (po izdaniju1907s) (in Russian)

РЕЗЮМЕ

Основы и способы приобретения права собственности

Григорян Алиса

Арцахский государственный университет,
Преподаватель кафедры истории и правоведения
Степанакерт, Арцах

Целью работы является формирование представления об основах и способах приобретения прва собственности, их классификации, углубление научных знаний, касающихся способов приобретения права собственности, освещение широкого спектра вопросов, имеющих отношение к данной теме.

Для достижения данной цели необходимо решить следующие задачи: раскрыть содержание права собственности, проанализировать понятие приобретения права собственности, основы, способы формирования, осветить круг основных вопросов, сушествующих в литературе, формулировка и обоснование собственной точки зрения.

В ходе исследования были использованы методы сравнительно-правового, системного анализа, метод толкования норм права.

Основной вывод исследования состоит в том, что юридическое разделение способов приобретения права собственности на первоначальных и производных важен тем, что первоначальный способ приобретения права собственности возникает впервые и нет никаких сомнений в том, что он возникает в полном обьеме, а в случае производнго права право на вещь может возникнуть в том обьеме, который был у предыдущего собственника. При первоначальном приобретении фактически права собственности у владельца больше прав, чем при производном.

Анализируя различные основания и способы приобретения прав собственности, было определено, что указанные отношения не являются равнозначными. Основанием для приобретения прав собственности считаются юридические факты, которые в соотвествие с законом приводятся в возникновении права собственности. Фактические действия, в результате которых лицо приобретает права собственности, следует признать как способы приобретения права собственности.

Придерживаясь традиционных взглядов на разделение права собственности на начальную и производную формы собственности по критериям правопреемства, первому следует приписывать создание и владение новым имуществом, а второму - передачу, конфискацию, выкуп.

Ключевые слова: права собственности, основы и способы приобретения права собственности, критерии правопреемства, первоначальные и производные способы приобретения право собственности,, создание,передача,изьятие, выкуп.

SUMMARY

Fundamentals and Methods of Acquiring Property Rights

Grigoryan Alisa

Artsakh State University,
Department of History and Law, Lecturer
Stepanakert, Artsakh

The aim of the work is to form an idea of the basics and methods of acquiring property rights, their classification, to deepen scientific knowledge concerning the methods of acquiring property rights, to highlight a wide range of issues related to this topic.

To achieve this goal, it is necessary to solve the following tasks: to reveal the content of property rights, to analyze the concept of acquiring property rights, the basics, methods of formation, to highlight the range of main issues existing in the literature, the formulation and justification of one's own point of view.

In the course of the study, the methods of comparative legal, system analysis, and the method of interpreting the norms of law were used.

The main conclusion of the study is that the legal separation of the methods of acquiring ownership of the original and derivative is important because the original method of acquiring ownership arises for the first time and there is no doubt that it arises in full volume, and in the case of a derivative right, the right to a thing may arise in the volume that the previous owner. With the initial acquisition of the actual ownership rights, the owner has more rights than with the derivative.

Analyzing the various grounds and methods of acquiring property rights, it was determined that these relations are not equivalent. The basis for the acquisition of property rights is considered to be legal facts, which, in accordance with the law, are given in the origin of the right of ownership. Actual actions, as a result of which a person acquires property rights, should be recognized as methods of acquiring property rights.

Adhering to traditional views on the division of ownership into initial and derivative forms of ownership according to the criteria of succession, the first should be attributed to the creation and possession of new property, and the second - transfer, confiscation, redemption.

Keywords: property rights, bases and methods of acquisition of ownership, criteria of succession, initial and derivative methods of acquisition of ownership, creation, transfer, acquisition, redemption.